ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2 /ПРОТОКОЛ н.2/

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/320» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման հանձնաժողովի նիստի
Заседание комиссии по вскрытию заявок электронного аукциона с кодом "EQ-EAJAPDZB-26/320

Նիստի անցկացման՝
-վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 128 սենյակ,
-օրը՝ 02.09.2026թ.-ժամը՝ 12:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝	Մ. Խաչատրյան /բացակա/
Հանձնաժողովի նախագահող ՝	Ս. Մանուկյան
Հանձնաժողովի անդամ	Ե. Հարությունյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ի. Եղիազարյան
Участвовали	
Председательствующий комиссии:	С. Манукян /отсутствующий/
Член комисии:	Е. Арутюнян
Секретарь комисии:	И. Егиазарян

1. Հաշվի առնելով հանձանաժողովի նախագահ՝ Մ. Խաչատրյանի այս նիստին մասնակցելու անհնարինությունը և հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի 1-ին կետը «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/320» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի այս նիստը նախագահում է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն՝ Ս. Մանուկյանը:

2. ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/320» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ստացված հարցումների և դրանց վերաբերյալ պարզաբանումներ տրամադրելու մասին:
2,, О запросах, полученных в рамках процедуры закупки с кодом «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/320», и о предоставлении разъяснений

(Ս. Մանուկյան, С. Манукян)

2.1 Ընդունել ի գիտություն, որ էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am էլեկտրոնային հարթակում «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/320» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ստացվել են հարցումներ, որոնց ի պատասխան գնահատող հանձնաժողովի կողմից տրվել են համապատասխան պարզաբանումներ:

Ստորև ներկայացվում են հարցադրումների և պարզաբանումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հարցադրում ՝ 1

Հարգելի գործընկեր, ներկայացված տեխնիկական բնութագրերում սահմանված պահանջները նախատեսում են գնում միայն մեկ արտադրողի կողմից արտադրված հստակ համակարգ , որը փաստացի սահմանափակում է գնման ընթացակարգին մասնակցելու հնարավորությունը՝ այն պայմանավորելով միայն մեկ կոնկրետ արտադրողի կոնկրետ համակարգի (DSS Professional) և մոդելների առաջարկմամբ, ինչը հակասում է ՀՀ օրենսդրության պահանջներին եւ գնումների ոլորտում կիրառվող հիմնարար սկզբունքներին: «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն գնումների գործընթացը պետք է իրականացվի մրցակցության ապահովման եւ խրախուսման, ոչ խտրական վերաբերմունքի, հավասարության, համաչափության, հրապարակայնության եւ թափանցիկության, ինչպես նաեւ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման սկզբունքների անմիջական կիրառմամբ եւ պահպանմամբ: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի եւ որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են եւ սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին կամ համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից: Գնման առարկայի բնութագրերը պետք է նաեւ ապահովեն հավասար մրցակցային պայմաններ եւ չառաջացնեն անարդարացի խոչընդոտներ գնումների գործընթացում, ինչպես նաեւ լինեն օբյեկտիվորեն հիմնավորված եւ համարժեք՝ գնումն իրականացնելու անհրաժեշտությանը: Բացի այդ, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը եւ մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով եւ նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված՝ պատվիրատուի ղեկավարի հետ համաձայնեցված դեպքերում կատարվող գնումների: Ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս - ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը եւ արտադրողը: Հետեւապես, ապրանքային նշանի, արտադրողի կամ կոնկրետ մոդելի նշումը Օրենքի եւ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ իմաստով թույլատրելի է բացառապես այն դեպքում, երբ գնման առարկայի բնութագրումը տեխնիկական չափանիշներով օբյեկտիվորեն հնարավոր չէ, իսկ հակառակ պարագայում

գնման առարկան պետք է բնութագրվի տեխնիկական չափանիշներով՝ առանց կոնկրետ արտադրողներով կամ մոդելներով սահմանափակման: Մինչդեռ հարկ ենք համարում ընդգծել, որ հիշյալ գնման ընթացակարգի հրավերին կից կարող էին ներկայացվել մանրամասն տեխնիկական բնութագրերը, որոնք հնարավորություն կընձեռեին հստակ սահմանել ձեռք բերվող սարքավորումների պահանջները՝ առանց կոնկրետ համակարգի, մոդելների կամ արտադրողների սահմանափակման: Վերոգրյալի համատեքստում՝ արձանագրում ենք, որ տեխնիկական բնութագրերում միայն մեկ կոնկրետ արտադրողի համակարգի և մոդելների ընդգրկումը չի բխում օբյեկտիվ անհրաժեշտությունից, չի հանդիսանում իրավաչափ եւ հանգեցնում է հնարավոր մասնակիցների շրջանակի անհիմն սահմանափակման, ինչպես նաեւ բարեխիղճ մրցակցության խաթարման: Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ տրամադրել իրավական եւ օբյեկտիվորեն հիմնավորված պարզաբանում առ այն, թե ինչով է պայմանավորված տեխնիկական բնութագրերում միայն նշված մեկ կոնկտեր արտադրողի համակարգի և մոդելների ներառումը, ինչպես նաեւ վերանայել եւ հնարավորության դեպքում փոփոխել հնարավորություն տալով այլ արտադրողների մասնակցությունը տվյալ ծածկագրով մրցույթի ընթացակարգին:

Պարզաբանում՝ 1

Ի պատասխան ներկայացված հարցման՝ հայտնում ենք, որ գնման տեխնիկական բնութագրով որևէ կոնկրետ արտադրողի տեսախցիկների, տեսաձայնագրիչների կամ հարակից սարքավորումների մատակարարման պարտադիր պահանջ, ինչպես նաև դրանց կոնկրետ մոդելներ սահմանված չեն: Տեխնիկական բնութագիրը հնարավորություն է տալիս առաջարկելու տարբեր արտադրողների սարքավորումներ՝ պայմանով, որ դրանք համապատասխանեն սահմանված տեխնիկական և ֆունկցիոնալ պահանջներին և ապահովեն պահանջվող ինտեգրումը: Գնման առարկան բազմաբաղադրիչ տեսահսկման համակարգ է, որը ներառում է տեսախցիկներ, տեսաձայնագրիչներ, տվյալների պահպանման, ցանցային և անխափան սնուցման սարքավորումներ, մալուխային ենթակառուցվածք, տեղադրման և կարգաբերման աշխատանքներ, ինչպես նաև գործող կենտրոնացված կառավարման հարթակի ընդլայնում և նոր սարքավորումների ինտեգրում: Կառավարման հարթակի ընդլայնումը գնման առարկայի բաղադրիչներից մեկն է և չի պայմանավորում մյուս բաղադրիչների արտադրողի ընտրությունը: Տեխնիկական բնութագրում DSS Professional համակարգի նշումը պայմանավորված է նրանով, որ այն հանդիսանում է Երևանի քաղաքապետարանում արդեն իսկ գործող տեսահսկման միասնական կենտրոնացված կառավարման հարթակը: Սույն գնման նպատակը նոր կամ գործողին համարժեք այլ կառավարման հարթակի ձեռքբերումը չէ, այլ գործող համակարգի ընդլայնումը և նոր տեղադրվող տեսահսկման համակարգերի ներառումը առկա միասնական կառավարման միջավայրում: Ընդ որում, գործող համակարգի ընդլայնման որևէ կոնկրետ սարքավորման մոդել սահմանված չէ. այն կարող է իրականացվել ինչպես համապատասխան ծրագրաապարատային համալիրի (Appliance), այնպես էլ համապատասխան սերվերային միջավայրում տեղադրվող ծրագրային լուծման և անհրաժեշտ լիցենզիաների միջոցով: Տեսախցիկների և տեսաձայնագրիչների համար ևս արտադրող կամ կոնկրետ մոդել սահմանված չէ, իսկ այլ համակարգերի հետ ինտեգրման նպատակով պահանջվում է ONVIF ստանդարտի համապատասխան պրոֆիլների աջակցություն: Հետևաբար գործող կառավարման հարթակի նշումը պայմանավորված է պատվիրատուի առկա ենթակառուցվածքի հետ տեխնիկական համատեղելիության, արդեն իսկ կատարված ներդրումների պահպանման, միասնական կառավարման շարունակականության և գործող համակարգի ընդլայնման օբյեկտիվ անհրաժեշտությամբ:

Հարցադրում՝ 2

Հարգելի՛ պատվիրատու, Ուսումնասիրել ենք էլեկտրոնային աճուրդի հրավերը և տեխնիկական բնութագիրը՝ մասնակցության հայտ ներկայացնելու նպատակով: Մի շարք դրույթներ թույլ են տալիս տարընթերցում, ինչը խոչընդոտում է գնային առաջարկի ճշգրիտ ձևավորմանը: Խնդրում ենք տրամադրել պարզաբանումներ հետևյալի վերաբերյալ: 1. Կետ 10.2(2)-ը թույլ է տալիս լուծումը ներկայացնել ինչպես գործարանային ծրագրաապարատային համալիրի, այնպես էլ «համապատասխան սերվերային միջավայրում» տեղակայվող ծրագրային տարբերակով, սակայն չի նշվում, թե ով է ապահովում այդ միջավայրը: Խնդրում ենք պարզաբանել՝ սերվերային հզորությունները և օբյեկտների միջև կենտրոնացված մոնիտորինգի կապի ուղիները տրամադրվում են պատվիրատուի կողմից, թե ներառված են մատակարարման առարկայի մեջ: Եթե ներառված են՝ խնդրում ենք նշել սերվերի տեղակայման վայրը, միաժամանակյա միացումների ակնկալվող քանակը և կենտրոնացված արխիվի պահանջվող խորությունը: Խնդրում ենք նաև հայտնել, արդյոք մանկապարտեզներում առկա են գործող ինտերնետ կապուղիներ, և արդյոք դրանց արդիականացումը մտնում է աշխատանքների ծավալի մեջ: 2. Կետ 14-ի համաձայն վճարումը կատարվում է փաստացի տեղադրված, ինտեգրված և փորձարկված տեսահսկման կետերի քանակին համապատասխան՝ մեկ կետի գինը հաշվարկելով որպես պայմանագրի գին բաժանած 1800-ի: Խնդրում ենք հստակեցնել մեկ «կետի» կազմը, մասնավորապես՝ արդյոք դրա մեջ ներառվում են տեսախցիկը, մոնտաժային աշխատանքները և մալուխային ուղին մինչև PoE բաժանարար, ինչպես նաև ռեգիստրատորի, մոնտաժային պահարանի, անխափան սնուցման սարքի և հարթակին միացման համամասնական բաժինը: Խնդրում ենք նաև նշել կետերի ընդունման կարգը՝ ըստ առանձին մանկապարտեզի ամբողջական պատրաստության, թե ըստ փաստացի գործարկված կետերի՝ անկախ օբյեկտի ավարտվածությունից: 3. Տեխնիկական բնութագրի կետ 5-ով PoE բաժանարարներին ներկայացվող պահանջները՝ պորտերի քանակի և PoE բյուջեի համակցությամբ (8 պորտ՝ ոչ պակաս 96 Վտ, 16 պորտ՝ ոչ պակաս 130 Վտ), գործնականում կրկնում են շուկայում առկա կոնկրետ մոդելների՝ PFS3010-8ET-96-ի և PFS3018-16ET-135-ի, կատալոգային տվյալները: Խնդրում ենք հաստատել, որ ընդունելի է նշված պարամետրերին լիովին համապատասխանող կամ դրանք գերազանցող այլ արտադրողի սարքավորումների առաջարկը, և նշել, թե համարժեքությունը հիմնավորելու համար ինչ փաստաթղթեր պետք է ներկայացվեն հայտի կազմում՝ արտադրողի տեխնիկական թերթիկ, պարամետրերի համեմատական աղյուսակ, փորձարկման արձանագրություն, թե այլ: 4. Նույն հարցը ծրագրային ապահովման մասով ունի առանձնահատկություն: Կետ 10.2(1)-ը պահանջում է, որ լուծումը հանդիսանա գործող DSS Professional համակարգի պաշտոնական ընդլայնման բաղադրիչ, ինչը փաստացի բացառում է այլ արտադրողի կառավարման հարթակը: Խնդրում ենք հստակեցնել՝ թույլատրվո՞ւմ է առաջարկել այլընտրանքային կառավարման հարթակ, եթե այն ապահովում է կետ 10.1-ով նախատեսված ողջ ֆունկցիոնալը և ինտեգրվում է գործող համակարգին առանց վերջինիս վերակառուցման, թե՞ պահանջվում է բացառապես DSS Professional-ի ընդլայնում: Երկրորդ դեպքում խնդրում ենք հայտնել գործող համակարգի տարբերակը և արդեն

ակտիվացված ալիքների քանակը, քանի որ դրանից է կախված ընդլայնման լիցենզիաների ճիշտ հաշվարկը: 5. Լիցենզավորման մասով խնդրում ենք պարզաբանել՝ արդյոք մինչև 1800 ալիքի լիցենզիաներն ամբողջությամբ ներառվում են պայմանագրի գնի մեջ, թե դրանց մի մասն արդեն առկա է պատվիրատուի մոտ: Կետ 10.2(13)-ը սահմանում է անժամկետ (Perpetual) լիցենզիաների պահանջ, սակայն խնդրում ենք հաստատել, արդյոք այդ պահանջը տարածվում է նաև արտադրողի տեխնիկական աջակցության և ծրագրային թարմացումների փաթեթի վրա, և վերջինիս դեպքում՝ նշել պահանջվող ժամկետը: Խնդրում ենք նաև հստակեցնել, թե ում անվամբ են գրանցվում լիցենզիաները և ում մոտ են մնում պայմանագրի կատարումից հետո: 6. Կետ 4-ը սահմանում է արխիվի առնվազն 7-օրյա խորություն «իրականացված անդադար տեսաձայնագրության պարագայում», մինչդեռ կետ 3-ը ռեգիստրատորից պահանջում է նշված ժամանակահատվածներում շարժի հայտնաբերմամբ ձայնագրության հնարավորություն: Սկավառակների ծավալի և ռեգիստրատորների կոնֆիգուրացիայի հաշվարկի առումով այս երկու դրույթները տալիս են էապես տարբեր արդյունքներ: Խնդրում ենք հստակեցնել, թե որ ռեժիմն է ընդունվում որպես հաշվարկային հիմք՝ շուրջօրյա անընդհատ ձայնագրությո՞ւն, թե՞ ձայնագրություն շարժի դեպքում, և արդյոք 7-օրյա շեմը վերաբերում է հենց ընտրված ռեժիմին: 7. Կետ 16(2)-ը մասնակցից պահանջում է ներկայացնել համանման և տվյալ նախագծի առնվազն 50%-ի ծավալի չափով փաստացի կատարված աշխատանքի պայմանագրի պատճեն, սակայն չի բացահայտվում, թե ինչ միավորով է չափվում այդ ծավալը: Խնդրում ենք հստակեցնել՝ 50%-ը հաշվարկվում է պայմանագրի արժեքո՞վ, տեսահսկման կետերի քանակո՞վ, թե՞ սպասարկվող օբյեկտների թվով: Խնդրում ենք նաև պարզաբանել, թե ինչ չափանիշով է աշխատանքը համարվում «համանման»՝ բավարա՞ր է տեսահսկման համակարգի մատակարարումն ու տեղադրումը, թե՞ պարտադիր է նաև կենտրոնացված կառավարման հարթակի հետ ինտեգրման բաղադրիչի առկայությունը: Ի լրումն՝ խնդրում ենք հայտնել, արդյոք ընդունվում է ոչ պետական պատվիրատուի հետ կնքված պայմանագիրը, կարո՞ղ է պահանջվող ծավալն ապահովվել մեկից ավելի պայմանագրերի հանրագումարով, հաշվառվո՞ւմ է համատեղ գործունեության մասնակցի կամ ենթակապալառուի փորձառությունը, և պայմանագրի պատճենից բացի պահանջվո՞ւմ է աշխատանքների փաստացի կատարումը հավաստող հանձնման-ընդունման ակտ կամ այլ փաստաթուղթ: 8. Հավելված N 2-ով ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանված պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 120-րդ օրացուցային օրը: Միաժամանակ, կետ 1-ի համաձայն, յուրաքանչյուր մանկապարտեզում աշխատանքները կարող են սկսվել միայն այդ օբյեկտի տեսահսկման նախագիծը պատվիրատուի կողմից հաստատվելուց հետո, իսկ հաստատման ժամկետ հրավերով նախատեսված չէ: 45–50 օբյեկտի դեպքում խոսքը նույնքան առանձին նախագծի և հաստատման մասին է: Խնդրում ենք պարզաբանել՝ սահմանվո՞ւմ է նախագծերի հաստատման առավելագույն ժամկետ, և արդյոք հաստատմանն ու օբյեկտներ մուտք ապահովելուն ուղղված ժամանակահատվածները բացառվում են 120-օրյա հաշվարկից: Խնդրում ենք նաև հստակեցնել, թե 120-րդ օրվա դրությամբ ինչ ծավալ պետք է ավարտված լինի՝ միայն մատակարարումն ու տեղադրումը, թե նաև կետ 12-ով նախատեսված ընդունման փորձարկումը, փորձնական շահագործումը և ադմինիստրատորների ուսուցումը, և արդյոք թույլատրվում է փուլային մատակարարում ու ընդունում ըստ առանձին օբյեկտների, ինչը ենթադրում է կետ 14-ի՝ պատվեր-առաջադրանքներով վճարման կարգը: Առանձին ուշադրություն ենք հրավիրում հետևյալի վրա: Մեր փորձով և շուկայում գործող պրակտիկայով՝ 1800 տեսախցիկի, դրանց համապատասխան ռեգիստրատորների, կոշտ սկավառակների և PoE բաժանարարների արտադրության ու Հայաստան առաքման ժամկետը սովորաբար կազմում է 8–16 շաբաթ: 120 օրացուցային օրում, որի մեջ պետք է տեղավորվեն նաև 45–50 օբյեկտի նախագծումը, դրանց հաստատումը, մոնտաժային և կապուղիների անցկացման աշխատանքները, DSS Professional-ի հետ ինտեգրումը, ընդունման փորձարկումը, փորձնական շահագործումը և ուսուցումը, առաքման ժամկետը գործնականում պետք է կրճատվի մինչև օրեր: Դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ նշված քանակի և հենց նշված բնութագրերին համապատասխանող սարքավորումն արդեն առկա է պոտենցիալ մասնակիցներից որևէ մեկի պահեստում: Հաշվի առնելով նաև, որ կետ 5-ի պարամետրերը համընկնում են ընդամենը երկու կոնկրետ մոդելի հետ, իսկ կառավարման հարթակը նշված է անվանապես, խնդրում ենք հայտնել՝ մինչև սույն ընթացակարգի հայտարարումը որևէ հարթակում կատարվե՞լ է սույն գնման վերաբերյալ հրապարակում, հայտարարում կամ հիշատակում, և եթե այո՝ նշել դրանց ամսաթվերն ու աղբյուրները: Խնդրում ենք նաև հայտնել, արդյոք տեխնիկական բնութագրի կազմմանը մասնակցել կամ աջակցել է որևէ ընկերություն կամ նրա ներկայացուցիչ, և դրական պատասխանի դեպքում՝ նշել, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով ամրագրված՝ մասնակցության հավասար պայմանների ապահովման համար: Եթե վերոնշյալ ժամանակահատվածները 120-օրյա ժամկետից չեն բացառվում, խնդրում ենք դիտարկել մատակարարման ժամկետի երկարաձգման հնարավորությունը՝ հաշվի առնելով օբյեկտների քանակը և կետ 13-ով սահմանված՝ մանկապարտեզի բնականոն գործունեությանը չխանգարելու պահանջը: Խնդրում ենք պարզաբանումները տրամադրել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Պարզաբանում՝ 2

Ի պատասխան Ձեր հարցմանը՝ տեղեկացնում եմ. • Տեխնիկական բնութագրի 10.2 կետով նախատեսված է գործող կենտրոնացված կառավարման համակարգի ընդլայնման երկու հնարավոր տարբերակ՝ համապատասխան ծրագրաապարատային համալիր (Appliance) կամ համապատասխան սերվերային միջավայրում տեղակայվող ծրագրային լուծում: Մասնակցի կողմից ընտրված լուծման բնականոն աշխատանքի համար անհրաժեշտ սերվերային ռեսուրսները, եթե դրանք անհրաժեշտ են առաջարկվող լուծման իրականացման համար, պետք է ներառվեն առաջարկի կազմում: Կենտրոնացված արխիվի ստեղծում սույն գնման շրջանակում նախատեսված չէ. տեսագրությունների պահպանումն իրականացվում է օբյեկտներում տեղադրվող տեսաձայնագրիչներում՝ տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին համապատասխան: Երևանի բոլոր մանկապարտեզներն ապահովված են ինտերնետ կապի հասանելիությամբ: Գործող ինտերնետ կապուղիների արդիականացում կամ նոր արտաքին կապուղիների ստեղծում տեխնիկական բնութագրով նախատեսված չէ: • Մեկ տեսահսկման կետը մեկ ամբողջությամբ տեղադրված, միացված, կարգաբերված, գործող կառավարման համակարգին ինտեգրված և ընդունման փորձարկումն անցած տեսախցիկն է՝ դրա բնականոն աշխատանքի համար անհրաժեշտ մոնտաժային և ենթակառուցվածքային բաղադրիչներով: Պայմանագրի ընդհանուր գինը ներառում է տեխնիկական բնութագրով նախատեսված ամբողջական լուծման իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների, նյութերի և աշխատանքների արժեքը, հետևաբար մեկ տեսահսկման կետի հաշվարկային արժեքը ներառում է նաև ընդհանուր օգտագործման սարքավորումների և համակարգային բաղադրիչների համամասնական արժեքը: Վճարումը կատարվում է փաստացի տեղադրված, ինտեգրված, փորձարկված և պատվիրատուի կողմից ընդունված տեսահսկման կետերի քանակին համապատասխան: • Տեխնիկական բնութագրով PoE սարքավորումների որևէ արտադրող կամ կոնկրետ մոդել սահմանված չէ: Ընդունելի են տեխնիկական բնութագրով սահմանված նվազագույն

տեխնիկական և ֆունկցիոնալ պահանջներին համապատասխանող կամ դրանք գերազանցող տարբեր արտադրողների սարքավորումներ: Առաջարկվող սարքավորումների համապատասխանությունը հավաստվում է հրավերով նախատեսված փաստաթղթերով: • Սույն գնման նպատակը նոր կամ գործողին համարժեք այլ կենտրոնացված կառավարման հարթակի ձեռքբերումը չէ, այլ Երևանի քաղաքապետարանում արդեն իսկ գործող միասնական կենտրոնացված կառավարման համակարգի ընդլայնումը՝ առանց գործող համակարգի փոխարինման կամ զուգահեռ կառավարման հարթակի ներդրման: Միաժամանակ գնման առարկան բազմաբաղադրիչ տեսահսկման համակարգ է, իսկ կառավարման հարթակի ընդլայնումը դրա բաղադրիչներից մեկն է և չի պայմանավորում մյուս սարքավորումների արտադրողի ընտրությունը: Ընդլայնման որևէ կոնկրետ սարքավորման մոդել սահմանված չէ և այն կարող է իրականացվել տեխնիկական բնութագրով նախատեսված տարբերակներից որևէ մեկով՝ համապատասխան ծրագրաապարատային համալիրի կամ սերվերային միջավայրում տեղակայվող ծրագրային լուծման միջոցով: Մինչև 1800 նոր տեսահսկման կետերի համար պետք է ապահովվեն դրանց լիարժեք աշխատանքի և գործող կառավարման համակարգին ինտեգրման համար անհրաժեշտ լրացուցիչ լիցենզիաները՝ դրանց անհրաժեշտության դեպքում, ուստի գործող համակարգում արդեն ակտիվացված ալիքների քանակը առաջարկի հաշվարկի վրա ազդեցություն չունի: • Մատակարարվող մինչև 1800 նոր տեսահսկման կետերի համար պայմանագրի գնի շրջանակում պետք է ապահովվեն առաջարկվող լուծման բնականոն աշխատանքի և գործող կենտրոնացված կառավարման համակարգին ինտեգրման համար անհրաժեշտ բոլոր լրացուցիչ լիցենզիաները՝ դրանց անհրաժեշտության դեպքում: Perpetual պահանջը վերաբերում է ձեռք բերվող լիցենզիաների օգտագործման իրավունքին: Տեխնիկական աջակցության կամ ծրագրային թարմացումների առանձին ժամկետ տեխնիկական բնութագրով սահմանված չէ: Ձեռք բերվող լիցենզիաները պետք է տրամադրվեն պատվիրատուի օգտին և պայմանագրի կատարումից հետո մնան պատվիրատուի օգտագործման ներքո: • Պահեստավորման անհրաժեշտ ծավալի հաշվարկային հիմքը 24/7 շարունակական տեսագրությունն է, որի դեպքում յուրաքանչյուր օբյեկտում պետք է ապահովվի առնվազն 7 օրվա տեսագրությունների պահպանում: Շարժման հայտնաբերմամբ տեսագրման հնարավորությունը տեսաձայնագրիչի լրացուցիչ ֆունկցիոնալ հնարավորություն է և չի փոխարինում պահեստավորման ծավալի հաշվարկման համար սահմանված շարունակական տեսագրման ռեժիմին: • Կետ 16.2-ով սահմանված առնվազն 50% ծավալը հաշվարկվում է ներկայացվող համանման պայմանագրի արժեքով: Համանման է համարվում տեսահսկման համակարգերի մատակարարման և/կամ տեղադրման ու գործարկման աշխատանքների իրականացումը, և կոնկրետ արտադրողի կամ կոնկրետ կենտրոնացված կառավարման հարթակի հետ աշխատանքի փորձ պարտադիր չի պահանջվում: Պատվիրատուի պետական կամ ոչ պետական լինելու սահմանափակում սահմանված չէ: Մասնակցի փորձի և այն հավաստող փաստաթղթերի նկատմամբ կիրառվում են հրավերով սահմանված պահանջները: • Պայմանագրի կատարման ընդհանուր ժամկետը սահմանված է հրավերով՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 120 օրացուցային օր: Նախագծումը, համաձայնեցումը, սարքավորումների մատակարարումը, տեղադրումը, ինտեգրումը, փորձարկումը, փորձնական շահագործումը, ուսուցումը և տեխնիկական բնութագրով նախատեսված մյուս գործողությունները պետք է կազմակերպվեն սահմանված ընդհանուր ժամկետի շրջանակում: Նախագծերի հաստատման և օբյեկտներ մուտքի ապահովման ժամանակահատվածները 120-օրյա ժամկետից առանձին բացառելու պայման հրավերով սահմանված չէ: Աշխատանքները կարող են կազմակերպվել տարբեր օբյեկտներում զուգահեռ և փուլային՝ պահպանելով յուրաքանչյուր օբյեկտի նախագծի նախնական հաստատման և տեխնիկական բնութագրի մյուս պահանջները: Ընդունումն ու վճարումն իրականացվում են հրավերով և տեխնիկական բնութագրով սահմանված կարգով: Մինչև սույն գնման ընթացակարգի հայտարարումը տեխնիկական բնութագրի մշակմանը որևէ հնարավոր մասնակից, մատակարար, արտադրող կամ նրանց ներկայացուցիչ չի մասնակցել: Տեխնիկական բնութագիրը մշակվել է պատվիրատուի կողմից՝ Երևանի քաղաքապետարանի շահառու ստորաբաժանումների հետ քննարկումների և բաց հասանելի տեխնիկական տեղեկատվության ուսումնասիրության հիման վրա: Տեխնիկական բնութագրով որևէ կոնկրետ արտադրողի տեսախցիկների, տեսաձայնագրիչների կամ PoE սարքավորումների մոդել սահմանված չէ: Պայմանագրի կատարման ժամկետի փոփոխություն չի նախատեսվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 2 դեմ - 0:

3. Տեղեկություններ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/320» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ս. Մանուկյան)

3.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.eauction.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 31.08.2026թ-ին, ժամը 12:00-ին, իսկ էլեկտրոնային հակադարձ աճուրդը կայացել է՝ 01.09.2026 թ.-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 2 դեմ - 0:

3. Информация о вскрытии заявок на электронный аукцион с кодом «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/320»

(С. Манукян)

3.1 Принять к сведению, что заявки на процедуру покупки были открыты www.eauction.armeps.am 31.08.2026 года, в 12:00, а электронный обратный аукцион состоялся 01.09.2026 года. в 12:00.

Принято решение: за-2 против-0

4. «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/320» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

(Ս. Մանուկյան)

.h/h	Մասնակցի անվանումը /Имя участника/	
1	ՕԱԶԻՍ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍՊԸ	ООО «Оазис компютер»

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0

5. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

---

5. О ценовом предложении, представленный участником

(Ս. Մանուկյան)

Հ/հ	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ	Շնորհման կառավարում
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին		
1	1	ՕԱԶԻՍ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ ՍՊԸ	158400000 AMD	158400000 AMD	20 %	190080000 AMD	132000000 AMD	20 %	158400000.00 AMD		

6. Գնահատող հանձնաժողովի որոշեց կասեցնել նիստը և ներկայացված հայտերի ուսումնասիրման և գնահատման նպատակով հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 1-ին հարկ, 128 սենյակ հասցեում.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0

6. Оценочная комиссия для рассмотрения и оценки заявок решила приостановить заседание и следующее заседание комиссии провести не позже чем в течение последующих пятнадцать рабочих дней, в Мэрии г. Еревана, по адресу Аргишти 1, 1 этаж, комната 128.

Принято решение: за-2, против-0

Հանձնաժողովի նախագահող՝ Председательствуюший комиссии:		Ս. Մանուկյան	С. Манукян
Անդամ՝ Член комисии:		Ե. Հարությունյան	Е. Арутюнян
Համակարգող՝ Секретарь комисии:		Ի. Եղիազարյան	И. Егиазарян